

ՄԵՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ԿԱՄԻԼՈ ԽՈՍԵ ՍԵԼԱՅԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ
ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հոդվածի նպատակն է ներկայացնել իսպանացի գրող, Նոբելյան մրցանակակիր, տրեմենդիզմի հիմնադիր, Իսպանիայի թագավորական ակադեմիայի անդամ Կամիլո Խոսե Սելայի գեղագիտական մրասնորոշման ձևավորման որոշ գծեր և առանձնահատկություններ: Ընդհանուր գծերով քննվում են նաև այն գեղագիտական-գաղափարական փոփոխությունները, որոնք տեղի ունեցան իսպանական գրականության մեջ քաղաքացիական պատերազմից հետո: Հոդվածի շրջանակներում փորձ է արվում դիտարկել և վեր հանել Սելայի ստեղծագործական սկզբունքներն ու առանձնահատկությունները՝ հիմք ընդունելով «Պասկուալ Դուարտեի ընտանիքը», «Փեթակ» և «Ճանապարհորդություն դեպի Ալկաոհա» ստեղծագործությունները:

Բանալի բառեր. *փոփոխություն, էկզիստենցիալիզմ, գաղափարական սկզբունքներ և առանձնահատկություններ, վեպ, տրեմենդիզմ, մենություն*

1970-ական թվականները Իսպանիայի համար դարձան ֆրանկոյական բռնապետության փլուզման և Իսպանիայի՝ դեպի ժողովրդավարական զարգացում վերադարձի մի դժվարին ժամանակաշրջան: Հասարակական-քաղաքական կյանքում սկիզբ առած տեղաշարժերը մեծ փոփոխություններ մտցրին նաև գրական արժեքների համակարգում: Համընդհանուր ուշադրության և հետաքրքրության կենտրոնում արդեն նոր անուններ էին, որոնց ստեղծագործություններում արտացոլվում էր երկար սպասված շրջադարձը երկրի պատմության մեջ:

20-րդ դարի իսպանացի ականավոր գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Կամիլո Խոսե Սելայն իրավամբ համարվում է Իսպանիայի ամենաօբյեկտիվ և անկողմնակալ գրողներից մեկը: Այն փաստը, որ Կամիլո Սելան մեծ հեղինակություն է վայելում և ժամանակակից Իսպանիայի առավել հայտնի արձակագիրներից մեկն է, ընդունելի է անգամ նրանց համար, ովքեր համամիտ չեն նրա գաղափարական և գեղագիտական սկզբունքների հետ: Սելայի գրքերը թարգմանվել են աշխարհի տարբեր լեզուներով: Նա քաղաքացիական պատերազմից հետո գրականության ասպարեզ մուտք գործած առաջին գրողն էր, որին ընտրեցին Իսպանիայի Ակադեմիայի անդամ:

Սելան սեփական փորձով շատ լավ գիտեր ֆրանկիզմի տարիներին իսպանացի բոլոր գրողների առաջ ծառայած խնդիրներն ու դժվար

րությունները՝ հրատարակչի փնտրտուքներ, մամուլի կողմից անընդհատ հարձակումներ, երկար տարիների աղքատություն /Тертерян, 1980: 5/: Սելայի գրվածքներում ցայտուն կերպով երևում են ինքնակենսագրական տարրեր, որոնք բացահայտում են գրողների իրական վիճակը ֆրանկոյական վարչակարգի տարիներին: Այդ առնչությամբ նա գրում է. «Իսպանիայում գրողը միշտ և ամենից առաջ կասկածելի անձ է, ենթադրյալ հերետիկոս, այլադավան, նյարդայնացնող քննադատ, մարդ, ով լավ կլիներ, որ ապրեր այնպես, ինչպես բոլորը... Եվ ահա, երբ այդ երազվոտ երեխան, այդ խռովարար պատանին, այդ կարդացած երիտասարդը, այդ տղամարդ-գրողը դառնում է ծերունի, և նրա թիկունքը պաշտպանված է պատկառելի և պատվարժան անունով, որն ինքն է ստեղծել, նրան ամեն դեպքում հանդուրժում են՝ ծածուկ նրան նախանձելով և նրա մահը ցանկանալով, սակայն նրան չեն կարդում և չեն խոստովանում նրա մեջ այն առաջնորդողին և այն հայելին, որի մեջ հասարակությունը պետք է տեսնի իրեն» /Cela, 1961: 376/:

Սելայի գրական ճակատագիրը, սակայն, բարեհաջող դասավորվեց: Նա հաղթահարեց բոլոր խոչընդոտները և նվաճեց «վարպետի», «կենդանի դասականի» անուն: Երբ 1936 թվականին Իսպանիայում բռնկվեց քաղաքացիական պատերազմը, Սելան քսան տարեկան ուսանող էր, սկսնակ գրող. նրա պատանեկան բանաստեղծությունները գրվել են Պաբլո Ներուդայի ստեղծագործությունների մեծ ազդեցությամբ: Թոքախտի պատճառով Սելան երկար ժամանակ ստիպված եղավ մեկուսանալ և այդ մենակեցության ընթացքում լիովին նվիրվեց ընթերցանությանը:

Սելայի՝ որպես գրողի ձևավորման հարցում կարևոր դերակատարություն են ունեցել նրա վաղ ընթերցանությունները: Սելայի ոճի կայունությունը պայմանավորված է նրանով, որ նա անընդհատ վերընթերցում է նույն սիրելի գրքերը. «Սելեստինա», «Լասարիլյո», Սերվանտեսի, տասնիններորդ դարի ռուս վիպասանների և, այսպես կոչված, 1898-ական թվականների իսպանացի գրողների ստեղծագործությունները (Ունամունո, Ասորին, Մաչադո, Բարոխա, Վալյե Ինկլան):

Հարկ է նշել, որ Կամիլո Սելայի գեղարվեստական աշխարհայացքի ձևավորման գործում մեծ դերակատարում է ունեցել քսաներեորդ դարի իսպանացի հայտնի փիլիսոփա-էկզիստենցիալիստ Խոսե Օրտեգա ի Գասետը: Սելայի առաջին վեպերը գրվել են Օրտեգա ի Գասետի գաղափարների ազդեցությամբ, որը Սելայի երիտասարդական տարիների միակ հոգեհարազատ փիլիսոփան էր:

Երբ 1940-1941 թվականներին Սելան գրեց իր առաջին վեպը, Խոսե Օրտեգա ի Գասետը վտարանդի էր (նա հայրենիք վերադարձավ միայն 1945 թվականին). թեև նա բանադրանքի չէր ենթարկվել (նա մեկնել էր արտասահման ֆրանկոյական բանակի հաղթանակից առաջ), այնուամենայնիվ շատ կասկածելի և անվստահելի դեմք էր:

Եկեղեցական վեհապետները դիմեցին Վատիկանին՝ առաջարկելով նրա գրքերը ընդգրկել այն ստեղծագործությունների ցանկի մեջ, որ արգելված էին կաթոլիկներին, սակայն այդ խարդավանքը չհաջողվեց՝ շնորհիվ փիլիսոփայի՝ Եվրոպայում ունեցած մեծ հեղինակության:

Վտարանդի լինելու տարիներին Օրտեգա ի Գասետը 20-30-ական թվականների իր աշխատանքներում հեռանում է կոնկրետ պատմական և հասարակական հիմնահարցերից:

«Մարդը և մարդիկ» գրքում Օրտեգա ի Գասետը զարգացնում է էկզիստենցիալիստական փիլիսոփայության արմատական դրույթների իր տարբերակը: Գիրքն ամբողջությամբ լույս է տեսնում հետմահու՝ 1957 թվականին, սակայն դրա առաջին, ամենաավարտուն մասերը տպագրվել են դեռևս 1939 թվականին Արգենտինայում, և, անշուշտ, Սելան դրանց ծանոթ էր: Այդ գլուխներում Օրտեգա ի Գասետն առաջ է քաշում «մենության»՝ իբրև մարդկային կեցության «արմատական» էության մասին դրույթը: Ըստ Օրտեգա ի Գասետի՝ այն ամենը, ինչ անում է մարդը հասարակության մեջ, «մտացածին կյանքն» է, և մարդու վրա արտաքին աշխարհի ներգործության բոլոր ձևերը օտարացնող երևույթներ են:

«Օտարումը խլացնում, կուրացնում է մարդուն, ստիպում է նրան գործել մեխանիկորեն, ինչ-որ խելագար լուսնոտության մեջ», - գրում է նա /Ortega y Gasset, 1957: 36/: Սակայն մարդուն տրված է իր մեջ ամփոփվելու, ինքնախորասուզվելու հրաշալի հնարավորություն: Մենության մեջ հոսող կյանքն է հենց իսկական կյանքը: Ըստ Օրտեգա ի Գասետի՝ մարդկային կեցության միակ հնարավոր երկրնտրանքը պետք է լինի կա՛մ անձը ոչնչացնող օտարումը, եթե մարդը ցանկանում է ապրել հասարակական աշխարհում, կա՛մ ինքնախորասուզումը, եթե նա կկարողանա երես թեքել աշխարհից:

Այս տեսությունը մեծ ազդեցություն գործեց երիտասարդ գրող Սելայի վրա: Ֆրանկոյական վարչակարգի առաջին տաս տարիների պաշտոնական գաղափարախոսության անկյունաքարը, այսպես կոչված, «իսպանական ոգու» կամ «իսպանական ընդհանրություն» գաղափարն էր:

Գրաքննադատները հաճախ նշում են, որ Սելայի վրա մեծ ազդեցություն է ունեցել Օրտեգա ի Գասետի *անհատապաշտության* քարոզը, որը հակադրվում էր ֆրանկոյական «իսպանական ընդհանրության» պաշտոնական ուսմունքին: «Իսպանական ոգին» կամ «իսպանական ընդհանրությունը» ենթադրում էր իսպանական ազգային յուրահատուկ բնավորության սուբստանցիա, հիմք, այն է՝ նվիրվածություն ավանդույթներին, կաթոլիկություն և միստիցիզմ, հոգևոր և կրոնական արժեքների գերադասում նյութականից: Իսկ Օրտեգա ի Գասետի փիլիսոփայությունը աներկբայորեն քանդում էր ֆրանկոյական գաղափարախոսության հիմունքները և մեծ ազդեցություն թողնում կրթված և մտավորական երիտասարդության վրա:

Օրտեգա ի Գասետի փիլիսոփայական գաղափարները մեծապես ազդեցին նաև Սելայի գեղարվեստական աշխարհայացքի վրա և իրենց արծազանքները գտան նրա «Պասկուալ Դուարտեի ընտանիքը» և «Փեթակ» վեպերում:

Հետպատերազմյան Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում էկզիստենցիալիզմը շարունակում էր մնալ փիլիսոփայության գլխավոր ուղղություններից մեկը, իսկ Իսպանիայում նրա ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ 1940-1980-ական թվականների գրեթե ոչ մի մտածող չկարողացավ խուսափել այդ ազդեցությունից:

Էկզիստենցիալիզմը (լատիներեն *existentia* – գոյություն) կամ «գոյության» փիլիսոփայությունը 20-րդ դարի ամենատարածված հակագիտապաշտական փիլիսոփայական ուղղությունն է, որը ձևավորվել է առաջին աշխարհամարտից հետո Գերմանիայում և 40-ական թվականներին Ֆրանսիայում, որից հետո մեծ տարածում է ստացել եվրոպական երկրներում:

Էկզիստենցիալիստական փիլիսոփայության հիմնական թեման էր մարդկային գոյությունը, անհատի ճակատագիրը ժամանակակից աշխարհում, կյանքի իմաստը և նպատակը, մարդու ազատությունը, օտարումը, անհատի և հասարակության հարաբերությունները և այլն: Համընդհանուր ճգնաժամի մեջ հայտնված մարդուն հոգեհարազատ այդ հարցերի արծարծումը գեղարվեստական գրականության և փիլիսոփայական ուսմունքներում, նպաստեց էկզիստենցիալիստական գաղափարների արագ տարածմանը արևմտյան երկրներում:

Էկզիստենցիալիստական փիլիսոփայման ելակետը *էկզիստենցիալ* մարդկային գոյություն, հասկացությունն է: Էկզիստենցիան այն է, ինչ երբեք չի դառնում օբյեկտ: Իսկ քանի որ ճանաչել կարելի է միայն այն, ինչ օբյեկտ է, ուստի էկզիստենցիան չի կարող դառնալ գիտական, ռացիոնալ ճանաչողության առարկա:

Էկզիստենցիան բնութագրվում է որպես վերջավոր, պատմական և իրադրային գոյություն: Մարդու պատմականությունը դրսևորվում է այն բանում, որ նա «նետված» է որոշակի իրադրության մեջ և գիտակցում է իր մահկանացու, վերջավոր լինելը /Չաքարյան, 2000: 313/:

Էկզիստենցիալիստական փիլիսոփայության մեջ կենտրոնական տեղ է գրավում անհատի և հասարակության հարաբերակցության և էկզիստենցիալի ազատության հարցը:

«Պասկուալ Դուարտեի ընտանիքը» վեպում կարելի է դիտարկել էկզիստենցիալիզմի փիլիսոփայական դրույթների ապացույցների սխեման, որը հնարավորություն ընձեռեց քննադատներին հետևողականորեն ներկայացնելու սյուժեի էկզիստենցիալիստական - այլաբանական մեկնաբանությունը:

Վեպը լույս է տեսել 1942թ-ին: Շատ քննադատների կարծիքով՝ այդ վեպը Իսպանիան ներսից պատակտող հիմնախնդիրների այլաբանական

պատկերումն է: «Պասկուալ Դուարտեի ընտանիքը» վեպում Սելան նկարագրում է մարդկային կյանքի ողջ ծանրությունը՝ առաջ քաշելով սոցիալական այնպիսի սուր խնդիրներ, ինչպիսիք են դաժանությունը, բռնությունը: Հեղինակը փոքր-ինչ չափազանցված է ներկայացնում ստեղծագործության հերոսների որոշ բացասական գծերը՝ ստիպելով ընթերցողին խորհել հասարակության բարոյական հիմքերի մասին:

Վեպը պատմում է մի մարդու մասին, որը դաժան սպանություններ է գործել և մահապատժից առաջ շարադրում է իր կյանքի պատմությունը: Վեպի հերոսը գյուղացի Պասկուալն է՝ մի սովորական մարդ, և ոչ թե ինչ-որ անհոգի չարագործ, բայց նա մեկը մյուսի հետևից դաժան արարքներ է կատարում, իսկ այնուհետև՝ արյունալի հանցագործություններ: Ունակ լինելով սիրելու՝ նա նաև ունակ է խղճալու. փախչելով իր ճակատագրից՝ նա անընդհատ վերադառնում է հայրենի գյուղ, կարծես ընդառաջ է գնում իր հանցագործություններին և մահապատժին: Նա ընթերցողին կարող է երևալ մերթ իբրև անբարո հրեշ, մերթ իբրև միջավայրի անմեղ գոհ:

Պասկուալի՝ մոր հանդեպ ունեցած ատելությունը դանդաղորեն հասունանում և հետագայում դառնում է ավելի բացահայտ և գիտակցված ու հանգեցնում է ողբերգական հետևանքների: Այնուհետև վեպի շարադրանքը սյուրռեալիստական և գրոտեսկային ոճից անցում է կատարում դեպի զրհերի նկատմամբ Պասկուալի կատաղի դատաստանի նկարագրությանը:

Սելան իր վեպերում ձգտում է ցույց տալ, որ ոչ ոք չարացած չի ծնվում, այլ հասարակությունն է այդպիսին դարձնում մարդուն: Վեպն ամբողջությամբ ներթափանցված է հոռետեսությամբ. գոյության անհեթեթության վառ արտահայտված մոտիվներ, անհատի ողբերգական մենություն. ահա սրանք են հերոսների էկզիստենցիան: Պասկուալի դժբախտությունների շղթան, ինչից նա չի կարողանում խուսափել, հենց նրա էկզիստենցիան է, որը ունի միայն մեկ ելք՝ մահը: Մոր հանդեպ տաժաժ ատելությունը, անկասկած, ատելություն է հենց անարդար և դաժան կյանքի նկատմամբ:

Վեպում պատկերված են նաև իսպանական գյուղում տիրող սարսափելի աղքատությունը, թույլ և անպաշտպան մարդկանց հանդեպ տիրող ծաղրի և անարգանքի նկարագրությունները:

Վեպի ծանր և ազդեցիկ հատվածներից մեկը գյուղացի երեխաների դաժան նկարագրությունն է, որոնք վազում են բանտ՝ նայելու բանտարկյալներին: Նրանց վարքագծում արտացոլվում է Պասկուալին շրջապատող ամբողջ աշխարհը: Մարդկային դաժանությունն այստեղ ներկայանում է հենց այնպես, ոչ դիտավորյալ, անտարբեր ձևով, ինչպես հատուկ է երեխաներին:

Պասկուալը ի ծնե մարդասպան չէ. ընդհակառակը, նրան բնությունից տրված են բարի զգացմունքներ՝ մտերմությունը քրոջ հետ, կիրքը ա-

ռաջին կնոջ՝ Լուլայի հանդեպ, երկրորդ կնոջ հանդեպ տաժաժ շնորհակալ քնքշանքը, որդու ծնվելու ուրախալի սպասումը: Պասկուալի վերջին հանցագործությունը օգնում է ընթերցողին ավելի ճիշտ հասկանալու նրա կերպարը. նրան դատում են ոչ թե մոր, այլև պատերազմի ժամանակ ծերունի կոմսի սպանության համար: Սակայն այդ սպանության համար չկա ոչ մի դրդապատճառ: Պասկուալն ինքն է խոստովանում, որ կոմսը իր հետ միշտ սիրալիր և ջերմ է եղել: Կոմսի սպանությունը վերածվում է վրեժի ոչ թե մարդու, այլև հասարակության հանդեպ: Զուր չէ, որ ծերունի կոմսը իրեն սպանողին անվանում է «հոգիս» և ժպտում է մահվան պահին: Այդ մեղավոր ժպիտը մի ամբողջ դասակարգի մեղքի խոստովանության վերջին ժեստն է Պասկուալի առջև /Тертерян, 1980: 9/:

Այս վեպում հեղինակն իր առջև խնդիր չի դնում վեր հանելու հերոսի հոգեկան տանջանքները, հույզերը և ներաշխարհը: Ստեղծագործության կերպարների կյանքի իրատեսական նկարագրության միջոցով Սելան ստեղծում է մի վեպ, որը, հիմնվելով դասական ռեալիզմի ավանդույթների վրա, նոր գրականության հիմքեր է դնում: Հեղինակի դերը բավականին նկատելի է ստեղծագործության մեջ՝ չնայած այն բանին, որ նա ամեն կերպ փորձում է գլխավոր հերոսի նկատմամբ «հեռավորություն» պահպանել: Նման ոճով շարադրելու ձևը ցույց է տալիս, որ հեղինակը չի ցանկանում իր վրա վերցնել հետպատերազմյան Իսպանիայում տեղի ունեցող իրադարձությունների որևէ պատասխանատվություն: Նա միայն պատմում և ցույց է տալիս՝ դատավորի դերը թողնելով ընթերցողին: Վեպը բարոյականության չափանիշ դարձավ և հիմք դրեց մարդու դերի փիլիսոփայական նոր ըմբռնմանը ֆրանկոյական Իսպանիայում:

Պասկուալ Դուարտեի մեջ տեսնելով հետպատերազմյան ժամանակաշրջանի իսպանացուն հատուկ բնորոշ գծերը՝ հեղինակը ստեղծեց գրոտեսկային, բայց միևնույն ժամանակ չափազանց ռեալիստական կերպար, որը կանխատեսում է իսպանական հասարակության մոտալուտ վախճանը, ինչից փորձում էր խույս տալ 40-50-ականների Իսպանիան: Հասարակ գյուղացու ատելությունը ֆրանկոյական Իսպանիայի կյանքի հանդեպ մեզ հիմք է տալիս հասկանալու ամբողջ ժողովրդի ատելությունը, որը ցայտուն կերպով դրսևորվեց քաղաքացիական պատերազմի ժամանակ: Հասարակության մեջ տիրող բացահայտ անարդարությունները և կոպիտ բռնություններն աստիճանաբար ծնում էին անհանդուրժողականություն: Սելան իր ուշադրությունը սևեռում է հասարակական սուր խնդիրների վրա և գալիս է այն եզրահանգմանը, որ իշխանությունների կողմից իրականացվող քայլերը հանգեցնում են հասարակության անկմանը:

Կամիլո Խոսե Սելայի «Պասկուալ Դուարտեի ընտանիքը» վեպը փիլիսոփայական խոր ընդհանրացումներով պատկերեց ոչ միայն այդ դարաշրջանի իսպանական իրականությունը, այլև հանդես եկավ ֆրանկոյական վարչակարգի անհաշտ քննադատությամբ:

Գիրքը ավարտելուց հետո Սելան մի քանի ամիս հրատարակիչ էր փնտրում, սակայն նրան ամենուրեք մերժում էին՝ պատճառաբանելով, որ վեպը չափազանց մռայլ է և լի հանցագործություններով: Սելան խնդրեց հայտնի գրող Պիո Բարոխային, ով մեծ համակրանք էր տածում Սելայի հանդեպ, նախաբան գրել վեպի համար: Բարոխայն կարդաց ձեռագիրը և այն վերադարձրեց հեղինակին՝ ասելով. «Լսե՛ք, եթե դուք ուզում եք բանտ ընկնել, ապա մենակ գնացեք: Ես արդեն այն տարիքում չեմ, որ ինձ բանտ քարշ տան, ես չեմ ուզում այնտեղ հայտնվել ո՛չ ձեզ հետ, ո՛չ էլ մեկ այլ ուրիշի հետ» /Тертерян, 1980: 11/:

Սելայի մյուս վեպը՝ «Փեթակը», գրվել է 1943 թվականին, սակայն այն չի հրատարակվել Իսպանիայում: Եվ միայն 1951 թվականին հեղինակին հաջողվեց հրատարակել այն Արգենտինայում: Երբ «Փեթակ» վեպի արգենտինական հրատարակությունը հասավ Մադրիդի գրախանութներ, դրա վաճառքը անմիջապես արգելվեց ամբողջ Իսպանիայի տարածքում: Իշխանությունների ընդունած այդ որոշումը մտավորականության շրջանում բողոքի մեծ ալիք բարձրացրեց:

«Փեթակ» վեպում գործողությունները տեղի են ունենում 1942 թվականին Մադրիդի թաղամասերից մեկում գտնվող մի փոքրիկ սրճարանի շուրջ: Վեպում կան ավելի քան վաթսուն գործող անձինք, ովքեր, ըստ իրենց նշանակության, ունեն հավասար կարևորություն: Մարդիկ հայտնվում են և իրար հետ դեռ որևէ առնչություն չունեցած՝ անհետանում են քաղաքի հսկայական «փեթակի» մեջ: Հանդիպում են սրճարանում, մի քանի բառ են փոխանակում, վիճում են կարճ թոպենների ընթացում և իրենց տեղը զիջում այլ մարդկանց:

Գրաքննադատները խստորեն հանդիմանում էին Սելային, որ վերջինս պարզապես ուրվագծում էր գործող անձանց բնավորությունները և ընթերցողին հնարավորություն չէր տալիս ավելի մոտիկից ուսումնասիրելու նրանց: Վեպում իրականում չկան բնավորություններ, սակայն դա բոլորովին էլ պայմանավորված չէ ստեղծագործության շարադրանքի և կոմպոզիցիայի թերություններով կամ հեղինակի վարպետության պակասով: Սելայի ուսումնասիրության առարկան բնավորությունը չէ, այլ կյանքի հունը, որը ձևավորվում է մանր պատահականություններից, արարքներից, մտադրություններից: Սելայի վեպի գործող անձինք զարմացնում են իրենց «հոգևոր» պակասով, բնազդային կենդանականությամբ: Մարդիկ կարծես ջղաձգորեն կառչում են իրենց ամենատարրական կարիքները բավարարելու հնարավորությունից: Վեպի մտահղացումը ծնվել է կյանքի անհեթեթության, անիմաստության հոռետեսական գաղափարի ազդեցությամբ: Սելան գրքում ստեղծում է խորհրդանշական կերպարներ, որոնք իրենց հերթին կարծես ճանապարհային նշաններ են դառնում «փեթակի» խճանկարում:

«Փեթակ»-ի հեղինակի արժանիքներից մեկն այն է, որ նա հետպատերազմյան իսպանական գրականության մեջ առաջիններից էր, ով

բաց աչքերով կարողացավ նայել սոցիալական դաժան իրականությանը: Եվ նա տեսավ, որ «Խաչակրաց արշավանք»-ից (այդպես էին հրամայել անվանել 1936-1939 թվականների քաղաքացիական պատերազմը) երեք-չորս տարի անց շարքային իսպանացու համար կյանքը ծանր և անիմաստ բեռ էր դարձել: Սովը, աղքատությունը և հոգևոր դատարկությունը դարձել էին մարդու անբաժան ուղեկիցները ֆրանկոյական Իսպանիայում:

«Պասկուալ Դուարտեի ընտանիքը», «Փեթակ», ինչպես նաև Կարմեն Լաֆորետի «Ոչինչ» վեպերը գրականության մեջ սկիզբ դրեցին «տրեմենդիզմ» կամ «դաժան ռեալիզմ» կոչվող ուղղությանը, որի հիմնադիրն է Կամիլո Խոսե Սելան: Տրեմենդիզմը արտացոլում էր Ֆրանկոյի բռնապետական վարչակարգի քաղաքական-տնտեսական և բարոյա-հոգեբանական ծանր մթնոլորտը: Սելային է պատկանում այս գեղագիտական հասկացության կարևոր հստակեցումը. «Տրեմենդիզմը գոյություն ունի այն բանի հետևանքով, որ կյանքն ինքնին սարսափելի է...» /Тертерян, 1980: 13/: Հեղինակը տրեմենդիզմի երևան գալը բացատրում է Իսպանիայի վերապրած պատմական ժամանակաշրջանով:

Տվյալ գրական ուղղության գրողները իրենց ստեղծագործություններում օգտագործում էին այնպիսի հնարքներ, որոնք թույլ են տալիս պատկերել դաժանություններով լի աշխարհը, որտեղ մահն ու բռնությունն առաջատար տեղ են զբաղեցնում, իսկ հերոսները, անզոր լինելով փոխելու որևէ բան, արձագանքում են իրենց շրջապատող աշխարհին ատելությամբ, անհանդուրժողականությամբ, թախիծով, ակնթարթային և պարզունակ պոռթկումներով:

Ընտանեկան կապերի խզում, համընդհանուր մենություն, բռնության սովորույթ, վաղվա օրվա նկատմամբ անվստահություն. ահա այսպիսին է 1940-ականների Իսպանիան՝ ըստ տրեմենդիստ գրողների ստեղծագործությունների:

Սակայն Սելան, ով տրեմենդիզմի անվիճելի և ճանաչված հիմնադիրն է, բազմիցս և խստորեն քննադատել է այս ուղղությունը և դրա տեսաբաններին: Բանն այն է, որ տրեմենդիզմը շատ արագ այլափոխվեց: Սելայի հետևորդներից շատ քչերն են «սարսափելին» ցույց տալիս որպես հասարակության վիճակ: Բազմաթիվ գրքերում մենության, սարսափի, լքվածության զգացողությունը բացատրվում է որպես մարդու վրա ծանրացած անեծք՝ մահ, մեղքի և մեղսավորության գիտակցում և այլն (այս առումով կարելի է հիշատակել Միգելի Դելիբեսի «Կիպարիսի սովերը երկարել է» վեպը):

1960-ական թվականներին իսպանական հասարակական-գրական ամսագրերում հայտնվեց նոր տերմին՝ գոյիզմ /Тертерян, 1989: 205/: Այդպես էր կոչվում գեղարվեստական այն շարժումը, որն իր մեջ ընդգրկում էր արվեստի բոլորը տեսակները և հատկապես գրականությունը:

Ըստ էության, այդ ուղղությունը ոչ այլ ինչ էր, քան իսպանական «հողականություն» (почвенничество) կոչվող գեղագիտական հոսանք:

«Հողականությունը» արմատավորվեց իսպանական մշակույթի մեջ, և պետք է նշել, որ այդ երևույթի պատմական արմատները ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ էր խորը և լայնածավալ հետազոտություն իրականացնել: Քաղաքացիական պատերազմից հետո գրականության մեջ «հողականությունը» սկսեց ձևավորվել համարյա զրոյից, քանի որ մշակութային ավանդույթը ընդհատված էր: Իհարկե, որոշ գաղափարներ այս կամ այն կերպ (ընտանեկան դաստիարակության, արվեստի գործերի միջոցով) փոխանցվել էին իսպանական մտավորականության նոր սերնդին և իր դերակատարությունն էին ունեցել նրա հոգևոր ձևավորման գործում, այնուհանդերձ շարժման նախնական փուլում կարևորվեց գրողների սոցիալական փորձառությունը հետպատերազմյան իրականության պայմաններում, և միայն այդ փորձի վերաիմաստավորման ընթացքում և դրա շնորհիվ նրանք «վերադարձան» ավանդույթներին՝ իրենց համար բացահայտելով նրա ողջ գրավչությունը:

Շուրջ քսան տարի «հողականությունը» իսպանական գրականության մեջ տիրապետող ուղղություն էր, որը վերածվել էր բազմաճյուղ գեղարվեստական մի երևույթի, որը գրավում էր իր փիլիսոփայությամբ և ինքնատիպ պատկերավորությամբ: Այդ ուղղության ազդեցությունը երկար տարիներ զգացվում էր Սելայի ստեղծագործություններում. գրական այդ հոսանքը մեծ արձագանքներ գտավ նաև այլ նշանավոր գրողների ստեղծագործություններում:

«Հողականությունը»՝ որպես գրական ուղղություն, քաղաքացիական պատերազմից հետո Իսպանիայի հոգևոր կյանքում դարձավ տիրապետող. նրանով հիանում են, նրա հետ վիճում են, հետևում են նրան և այն տապալում են:

Սելայի ստեղծագործություններում նոր ժանրերի ի հայտ գալը պայմանավորված էր ոչ միայն նրա գեղարվեստական մտածողության «ճգնաժամով», այլև նախևառաջ ժողովրդական կյանքի հետ շփման նոր ձևով:

1946 թվականին Սելան նոր ճամփորդություն ձեռնարկեց իր հայրենի երկրում՝ հին կաստիլյական Ալկառիա քաղաքի շրջանում: Սելայի ճամփորդական նոթերի առաջին՝ «Ճանապարհորդություն դեպի Ալկառիա» գիրքը յուրօրինակ էր և նորարական: «Ճանապարհորդություն դեպի Ալկառիա» գրքում չկա ճամփորդական նոթերի ոչ մի պարտադիր ծրագիր. չկան ո՛չ պատմական կամ գրական էքսկուրսներ, ո՛չ հագուստների և արարողությունների վառ նկարագրություններ, ո՛չ էլ տեղական բարքերի առանձնահատուկ մեկնաբանություններ: Սելան կանգ չի առնում՝ դիտելու դղյակներն ու տաճարները: Նրա գլխավոր նպատակը մարդկանց հետ զրուցելն է: Այդ խոսակցությունները հիմնականում առօրեական ու կենցաղային զրույցներ են եղանակի, բերքի, գյուղում տիրող

կարգերի մասին: Որքան էլ որ զրույցը կարճ ու անկորևոր լիներ, գրողը այն գրի էր առնում բացառիկ ճշգրտությամբ՝ պահպանելով զրուցակցի խոսքի առանձնահատկությունները: Եվ այդ ճշգրտությունը կարծես թե բնականության զարմանալի զգացողություն է ստեղծում: Գյուղացիները, երեխաները, աղքատները, իջևանատների տերերը, ժանդարմները, այսինքն՝ բոլորը, իրենց հոգսերով են ապրում, շտապում են, քանի որ ունեն բազմաթիվ գործեր: Ճամփորդը մտնում է ոչ թե մի հիանալի երկիր, ուր պատմությունը քարացել է, այլ մի վայր, որն ապրում է ինքն իր համար և իր կյանքով: «Ճանապարհորդություն դեպի Ալկաոհիա» գրքում Սելան իր անունից չի խոսում սովի և ծայրահեղ աղքատության մասին, ոչ մի եզրահանգում չի անում, սակայն այն կերպարները և տեսարանները, որ նա տեսնում է ու ներկայացնում, ընթերցողի համար ամեն ինչ դարձնում են հասկանալի. ընթերցողը Ալկաոհիա երկիրը տեսնում է աղքատ և տխուր: «Ճանապարհորդություն դեպի Ալկաոհիա» ստեղծագործությունը սահմանեց իսպանացի գրողների հաջորդ սերնդի գեղարվեստական մտածողության ձևավորման նոր ուղին: Սելայի առաջին ճանապարհորդությունից տաս-քսան տարի անց երիտասարդ գրողները ոտքով էին ուղևորվում Իսպանիայի քաղաքներ և գյուղեր:

Սելայի՝ քսան տարիների ընթացքում գրեթե չփոփոխվող յուրօրինակ վառ ոճը ձևավորվել է մի գերնպատակի ազդեցությամբ, այն է՝ հաղորդել խոսքի և մտքի ազգային առանձնահատկությունները: Նրա յուրօրինակության հիմքում ընկած է բառապաշարի հարստության և կառուցվածքի պարզության հրաշալի համադրությունը: Սելան ունի նախընտրած որոշ խոսակցական արտահայտություններ և շարահյուսական կաղապարներ, որոնք բխում են ժողովրդական լեզվից ու ոճից (կրկնություններ, իմաստով մոտ երկու կամ երեք մակդիրների զուգակցում և այլն):

Հարկ է նշել նաև, որ Սելայի գրչին բնորոշ է գրական խոսքին բացառիկ հմայք հաղորդող բառային ռիթմի հիանալի զգացումը: Սելան միշտ հավատարիմ է մնացել իր ոճին, անհնար է չճանաչել նրա գրչով գրած որևէ էջ կամ պարբերություն:

Նրա գրքերը, որոնք քննադատում էին ֆրանկոյական Իսպանիայում իշխող բարքերը, հետպատերազմյան իսպանական արձակում սկիզբ դրեցին գիտակցված սոցիալական քննադատությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Деев М. Н. Села. К.Х. Novelas cortas y cuentos. Москва: Прогресс, 1975.
2. Села К.Х. Мастера современной прозы. Москва: Прогресс, 1980.
3. Тертерян И. Камило Хосе Села. Предисловие к сборнику прозы. Москва: Прогресс, 1980.
4. Тертерян И. Современный испанский роман. Москва: Художественная литература, 1989.

5. Cela C.J. La familia de Pascual Duarte. Barcelona: Ediciones Destino, 2000.
6. Cela C.J. Cuatro figuras del 98. Barcelona: Aedos, 1961.
7. Cela C.J. La Colmena. Madrid: Edaf, 2006.
8. Cela C.J. Viaje a la Alcarria. Madrid: Espasa-Calpe, 1993.
9. Ortega y Gasset J. El Hombre y la gente. Madrid: Alianza, 1957.
10. Ջաքարյան Ս. Փիլիսոփայության պատմություն, Երևան, Նաիրի, 2000:

М. МАРТИРОСЯН – *Некоторые особенности эстетического мировоззрения Камило Хосе Селы.* – Цель статьи – представить некоторые черты и особенности формирования эстетического мышления испанского писателя, лауреата Нобелевской премии, основателя тремендизма, члена Испанской Королевской Академии языка Камило Хосе Селы. В общих чертах рассматриваются также эстетико-идеологические изменения в испанской литературе после гражданской войны. В данной статье предпринимается попытка рассмотреть творческие принципы и особенности Селы на основе произведений «Семья Паскуаля Дуарте», «Улей» и «Путешествие в Алкаррию».

Ключевые слова: философия, экзистенциализм, идеологические принципы и особенности, роман, тремендизм, одиночество

M. MARTIROSYAN – *On Some Peculiarities of Camilo Jose Cela's Aesthetic Ideology.* – The purpose of this paper is to present the formation of characteristic features and traits of Spanish writer, Nobel Prize winner, founder of tremendism, member of Royal Spanish Academy Camilo Jose Cela's aesthetic thinking. In general terms the paper also examines the major aesthetic-ideological changes in Spanish literature after the Spanish Civil War. An attempt is made to study and demonstrate Cela's creative principles and characteristic features through his works "The Family of Pascual Duarte", "The Hive" and "Journey to the Alcarria".

Key words: philosophy, existentialism, ideological principles and features, novel, tremendism, solitude

Ներկայացվել է՝ 03.04.2019
Երաշխավորվել է ԵՊՀ Արտասահմանյան գրականության
ամբիոնի կողմից
Ընդունվել է տպագրության՝ 25.04.2019